

ԳՐԱԿԱՆ

## Ս. Դ Յ Ե Ս. Լ Ռ

Մին պատկեր չէր, ոչ երազներ ցնորական  
Որ անցնելով թողին իրենց յուշ միայն.  
Մի՛ նմանցներ շիւղի եւ կամ փետուրի,  
եւ կամ թէ այս ծաղիկներուն վայրենի:  
Այո՛ անոնց պէս կ'անցնի կեանքը մարդուն;  
Բայց յայտնի է անտես շաւի՛ղը հոգւոյն:  
Ո՛չ. Աստուած, խիզ, եւ անցեալն են անմոռաց.  
Զեն ըսքօղեր զանոնք հեշտանք կամ կասկած:  
Զի՞ հընչեր սիրտն՝ երբ տարիները թռչուն  
«Քե՛զ կը սպասենք » կ'արձագանդեն միշտ հեռուն:  
Ո՛վ Աստուծմէ տընկըւած տունկ վաղանցիկ,  
Ո՛չ դաշտ, ո՛չ լեռ արմատիդ տեղն է բընիկ.  
Այլ ափը նեղ՝ ծովին՝ կլափովը որուն  
Մէկ եզրէն մի՛ւը կը տարուիս հէք, անտուն:  
Ժամանակին ա՛լք, ծո՛ւիք, ըսէ՛ք, ահազին.  
Ո՞ր անդունդներն է սուզած կեանքս իմ նախկին.  
Հեռանալով թէ ըլթողին զիս ունայն՝  
Բայց փոխեցին օրն ինձ մըթին գիշերուան:  
Ո՞ւր կը ըրչիք, չքնաղ յոյսերս հեռակայ,  
Բա՛խտ թերակազմ, է՞ր չէք դառնար ինձ հիմայ.  
Անցաւ դալա՛րը հասակիս իմ ծաղիկ,  
Կ'անցնին ուժ, սիրտ՝ տենչանքներուս հետ թողիք.  
Ես ալ կ'անցնիմ անցնողներէն վերջ այնքան,  
Անթերթ ծաղկիմ պէս հողմակոծ ու տատան:  
Ամէն ոլորտ արդ ետեւէն կը փակուի,  
Կէտը ներկայ՝ խախուտ նեցուկ, խոչ ոտքի:  
Գլորած կեանքէս արդ . . . ո՞ւր իյնամ, ո՞ւր հանդչիմ . . .  
Քու մէջ, բոլոր ժամանակիս Աստուածն իմ:  
(1845)

Թրգ. աշխ. Հ. Ե. Փ.

Հ. Պ. Ա. Խ. Ա. Ն.

## Ս. Թ Ս. Պ. Ս. Լ Ռ

Վաղը, դարձեալ վաղն, այս տարի, դալ տարի . . .  
Եւ մինչեւ ե՞րբ ժամանակին մարդ յառի.  
Պիտի հասնի՞ս առ կարծեցեալ ապառնիդ,  
Յոյսէն մօտ չէ՞ քեղ՝ պահը քու դամբանիդ.  
Եկողն արդեօք պիտի ըլլա՞յ ջինջ, հանդարտ  
Պարդեւարեր երազածիդ նըման արդ.  
Պիտի լեցուի՞ն ծակ անօթներն իդձերուդ,  
Եւ պիտ' հասնի՞ս արդեօք կատարն յոյսերուդ:

Տե՛ս չըխաբուի՛ս. մեղ վարագոյլ մ'ոսկեհիւս  
Կը ցուցնէ դէմքն ապաղային համակ լոյս.  
Ժամերն երբոր խըլես ծաղկի պէս թերթ թերթ  
Ըսես պիտ' ե՞րբ դայ ժամանակն անձկաւէտ.  
Մինչ նա եկած է, եւ դու չես իմանար.  
Չըհարցուցի՞ր սըրտով ճամբան երկնատար.  
Անմահ, միակ, չնաշխարհիկ այն հոդին  
Կը վըստահի՞ս սնանկ օրերու սեւ բախտին.  
Ահա քեզի ստոյդ ապառնի մ'է հասած,  
Ժամանակի ժանիքը կեանքդ է սղոցած.  
Ուզած-չուզածդ ահա հոս է, մահն ահա . . .  
Է՞ր կը վախես դիմաւորել դու վստահ.  
Անկարծ գիշերն՝ անվերջալոյս կեանք մ'ունի.  
Վայ վատնողին սուղ պահն՝ յուսով դալիքին:  
Քեղ քան ամէն ապառնի ստոյդ, մօտալրու,  
Մա՛հը ճանչցիր, եւ ո՛չ հեշտանքն հոսանուտ.  
Կենսապահ զէնք ա՛ռ քեզ հաւատքն անցեալին,  
Ապաղային Յո՛յոը եւ Մէրն ներկային:  
(1845)

Թրգ. աշխ. Հ. Ե. Փ.

Հ. Պ. Ա. Խ. Ա. Ն.

## Ա. Ս. Պ Օ Տ

Եթէ լոյսին մէջ, առաւօտ մը կեանքի,  
Զեռքս բոնէր սիրելի մէկը մեռած.  
Ես կընայի՛ պատմել հեքեաթը ոսկի  
Որուն մէջ սուրբը վիշապի մ'է յաղթած:

Պիտի բացուէ՛ր ինծի ճամբան վերստին  
Որ մանկութեան պարտէղներուն կը տանի.  
Անհո՛ւն ձայներ պիտ' ըսէին երբեմնի  
Հյաղերու սէրն ու կախարդանքը որտին:

Եւ դուցէ դա՞ր ըլթներուս որբ հայցումին  
Աղօթքի բառ մը, վարդենի՛ ծըլարձակ,  
Հին աղբիւրները քարերէն ցայտէին . . .

Ու զերդ հրաշքի մը պատկերովն սպիտակ  
Տեսնէի վէ՛րը, ըլլուրին հասնելով,  
Իմ ծընած տունըս ծիրանի գոտիով . . .

Ա. Ր. Ս. Ե. Ն. Ե. Ր. Կ. Ա. Թ.